ԴՎԻՆՈՒՄ ՊԵՂՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Վերջին երկու տասնամյակներում միջնադարյան Դվին քաղաքի ավերակներում պեղումների շնորհիվ բացվել են աշխարհիկ ճարտարապետության մի քանի մնացորդներ։ Դրանց մեջ առավել հետաքրքիր են Արշակունի հայ թագավորների դահասրահը և հում աղյուսե մի մեծ շինություն, որոնց պատմա-ճարտարապետական համառոտ քննությունը ներկայացնում ենք ստորև։

Ա. Արշակունիների դահասրահը

Արշակունիների դահասրահը 1962 թ. ի հայտ եկավ Դվինի միջնաբերդի գագաթի արևելյան ծայրին, հնագիտական արշավախմբի երկրաչափական զերո կետի տակ, դետնի մակերեսից 4,5 մետր խորության մեջ։ Այդ սրահը գտնըվում է վերևից հաշված երրորդ հողաշերտում։

Այդտեղ վերին շերտում 1946—1948 թթ. բացվել էր բնակելի մի մեծ տուն, կառուցված 893 թ. մեծ երկրաշարժից հետո, որը կործանվել էր քաղաքի վերջնական անկման ժամանակ՝ XIII դարի կեսերին[1]։ Նրա տակ, վերևից հաշված երկրորդ շերտի մեջ, ի հայտ եկավ հում աղյուսե մի մեծ շինություն, որի քննությունը ևս կկատարենք այստեղ։ Երրորդ շերտում, միջնաբերդի հարթակի արևելյան ծայրին բացվեց Արշակունի հայ թագավորների պալատի դահասրահը։

Ավելի խորքում կան այլ շերտեր ևս, սակայն դրանք պատկանում են քաղաքի հիմնադրումից առաջ տեղում գոյություն ունեցող հին բնակավայրին։

Դահասրահի և հում աղյուսե շենքի արանքում կար նաև միջանկյալ մի հողաշերտ, որի մեջ ի հայտ եկան մարգպանական Հայաստանի (V—VII դդ.) պետական դիվանին պատկանող բազմաթիվ կնքադրոշմներ, իշխանների և բարձր հոգևորականների մատանիներով դրոշմված։ Այդ կնքադրոշմները ժապավենով կապված են եղել այժմ ոչնչացած և կրակի ճարակ դարձած մագաղաթյա փաստաթղթերին։ Այդ նույն միջանկյալ շերտում բացվեց նաև կնիքներ և իշխանական կնքամատանիներ պատրաստող վարպետի արհեստանոց, որտեղ գտնվեցին մատանու փորագիր քարեր, մատանիների համար պատրաստված բազմաթիվ միջնադաս կնիքներ և դեռևս չփորագրված քարեր։ Արհեստանոցում գըտնվեցին նաև արհեստավորի գործիքներ և ձույլ ոսկու կտորտանք։

Վերևից հաշված երրորդ հողաշերտի մեջ բացված մեծ դահլիճը մենք անվերապահորեն Արշակունի թագավորների դահասրահ կոչեցինք ոչ միայն այն պատճառով, որ նա քաղաքի հիմնադրման ժամանակին է պատկանում (IV դարի 30-ական թթ.), այլև այն պատճառով, որ նրա կենտրոնում պահպանվել են արքայական գահավորակի մնացորդները։

---

1 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 122—138։



Նկ. 1. Միջնարերդի գագաթի պեղումների հատակագիծը

Դվինում Արշակունիների պալատի կառուցման մասին տեղեկություն է հաղորդում V դարի մատենագիր Փավստոս Բուզանդը։ Նա, խոսելով Խոսրով Կոդակի ժամանակ (330—338) Արշակունիների գահը Արտաշատից Դվին փոխադրելու, Դվինի շուրջը անտառներ տնկելու, այդ անտառները «Խոսրովակերտ» և «Մայրի տաճար» կոչելու մասին, այնուհետև ավելացնում է. «Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս»[2]։

Դվինն ուսումնասիրող հնագետներին Արշակունի հայ թագավորների ապարանքից առայժմ ծանոթ է միայն գահասրահը, որի կենտրոնում, հատակի վրա, ինչպես այդ տեսնում ենք լավ գծագրվող մնացորդներից, արքայական գահավորակն է եղել գրված իր հաստատուն **տեղում։**

Իբրև IV դարի աշխարհիկ կառուցվածք Դվինի արքայական գահասրահը բացառիկ նշանակություն ունի հայկական ճարտարապետության պատմության համար, քանի որ այդքան հնից մեզ հայտնի էին միայն կրոնական շենքեր, իսկ այժմ ունենք նաև աշխարհիկ կառուցվածք։

Արշակունիների գահասրահից տեղում քիչ բան է պահպանվել, գրեթե միայն հատակաձևը, ներքին սյունաշարերի սյուներից մեկի խարիսխը՝ այլանդակված վիճակում և պատերի երեսից ընկած առանձին սրբատաշ քարեր։ Սակայն լավն այն է, որ սրահի վրա հետագա ժամանակների փոփոխությունների կամ կարկատանների հետքեր չկան, որոնք այնքան դժվարացնում են ուսումնասիրողների գործը և խանգարում շենքերի սկզբնական տեսքը վերականգնելուն։

2 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 29։

Նկատելի է, որ գահասրահը հետզհետե փլատակվելու հետևանքով չի ավերվել, այլ միանդամից մարդու ձեռքով է քանդվել՝ տեղում այլ կառուցումներ կատարելու համար։ Սրահի հատակը լավ է մնացել, չնայած վերին շերտի մեջ փորված 18 հորեր իջել են սրահի հատակից ներքև և վնասել նրան։ Բացի այդ, սրահի արևելյան պատը բլուրի թեք եզրին դտնվելու պատճառով քանդվել է և նրա քարերից շատերը գլորվել են ներքև։ Դահլիճի ներսում տեղահանված և այլանդակված վիճակում դտնվեց ներքին սյունաշարերի միայն մի խարիսխ, իսկ սյան բներից և խոյակներից ոչինչ չի պահպանվել։ Այդ տեսակետից ավելի նպաստավոր պայմաններում է գտնվում նույն կառուցվածքն ունեցող կաթողիկոսի տան դահլիճը, որովհետև այնտեղ պահպանվել են արմավենազարդ մի խոյակ, կլոր սյուների բեկորներ, սյուների խարիսխներ և այլն։ Այնտեղ պահպանվել են նաև պատերի վրայից ընկած սրբատաշ քարեր։

Արշակունիների գահասրահի մնացորդների հիման վրա կարելի է գաղափար կազմել միայն նրա ընդհանուր հորինվածքի մասին, իսկ մանրամասնությունները ընդմիշտ մնալու են իբրև գաղտնիք։ Չգիտենք մուտքերի ձևավորումները, խոյակների ձևերն ու քանդակները, ներքին և արտաքին հարդարանքները և այլն։

Դժվար է պատկերացնել, որ արքայական հանդիսությունների դահլիճը չի ունեցել իր կոչմանը համապատասխանող զարդարանք, նույնիսկ IV դարում, երբ հայկական ճարտարապետության պատկանող շենքերը դեռևս չէին պճնազարդվել քանդակներով, որմնանկարներով և խճանկարներով։ Թեև եկեղեցական շենքերում արգելված էր աշխարհիկ տեսարաններ ներկայացնելը, բայց այդ արգելքն ամեն անգամ խախտում էին և եկեղեցիների պատերին ներկայացնում էին աշխարհիկ տեսարաններ, ինչպիսիք մենք տեսնում ենք Նախաներսիսյան Զվարթնոցում (IV—V դդ.), Աղցի դամբարանում (IV դ.) և Դվինում։ Հասկանալի է, որ այդպիսի տեսարաններով պետք է զարդարված լիներ նաև Դվինի արքայական գահասրահը, որտեղ ոչ մի արգելք չէր դրված ուղած եղանակով զարդարելու այն։

Սկզբնաղբյուրներից երևում է, որ Արշակունիների գահասրահը միայն իշխանական գործնական բնույթի ժողովների չէր ծառայում։ Նա միևնույն ժամանակ ճաշկերույթների և խրախճանքների տեղ էր։ Փավստոս Բուզանդը այդ գահասրահն անվանում է «տաճար ուրախության»[3], որտեղ նաև ճաշկերույթներ են տեղի ունեցել բոլոր իշխանների մասնակցությամբ։ Գիտենք, որ Խոսրով Կոդակն ինքն էլ որսորդության սիրահար էր և գահը Դվին փոխադրելուց առաջ նրա շրջապատում անտառներ տնկեց, որսի կենդանիներ բերեց որսորդությամբ զբաղվելու համար։

Գահասրահը, ինչպես ասացինք, կառուցված է միջնաբերդի բարձունքի հարթակի վրա, որն ամենահարմար կետն է Դվինի բլուրից Արարատյան դաշտը դիտելու համար։ Սրահն իր ուղղությամբ ձգված է արևելքից դեպի արևմուտք։ Սրահի երկարությունը ներսի չափերով 28,85 մետր է, իսկ լայնքը՝ 12,50։ Նշանակում է, դահլիճն ունեցել է 360 քմ մակերես։ Դահլիճի հիմնապատերը, ինչպես ասացինք, պահպանվել են նրա հատակին հավասար բարձրությամբ, իսկ պատերի վերին մասերից մնացել են միայն առանձին սրբատաշ քարեր՝

3 Փավստոս, էջ 104։ Նույն սովորությունը գոյություն է ունեցել նաև Պարսկաստանում. տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 32։



Նկ. 2. Գահասրահի ընդհանուր հատակագիծը

տեղահանված վիճակում։ Երևում է, որ դահլիճը կառուցված է եղել մոտակա քարհանքից բերված ավազաքարով, որով շինված են եղել Դվինի գրեթե բոլոր հնագույն մոնումենտալ շենքերը, ինչպիսիք են Կաթողիկե եկեղեցու սկզբնական շենքը (II—III դդ.) և միջնաբերդի ու կենտրոնական թաղի հնագույն կառուցվածքները։

Կառուցման ժամանակ գահասրահի հատակի հողը հարթել և մամլել են, հետո ծածկել են մանր և տափակ գետաքարերի բարակ շերտով և նորից մամլել։ Դրանից հետո հատակը ծածկել են կրաշաղախի շերտով և թակելով նորից մամլել ու հարթել։ Վերջում մեծ խնամքով փայլ են տվել հատակին։

Դահլիճն իր ներսում ունեցել է ծածկի ծանրությունն իրենց վրա կրող երկու շարք սրբատաշ քարե սյուներ, յուրաքանչյուր շարքում չորս հատ, որոնց միջոցով սրահի ներսը բաժանված է եղել երեք նավի։ Կենտրոնական նավը, սյուների առանցքից-առանցք հաշված, ունեցել է 7,10 մ լայնք, իսկ կողքի նավերը՝ 2,7 մ։ Ծածկը թեև հայտնի չէ, թե ինչպես է եղել, բայց կարծում ենք, որ կաթողիկոսի պալատի նման փայտակերտ է եղել և հավանաբար գահասրահի օրինակով է, որ V դարում կաթողիկոսարանի դահլիճը ևս փայտակերտ են արել, եռանավ ծածկով։ Թեև կենտրոնական նավի 7,10 մ լայնք ունեցող բացվածքը մեծ է մի գերանով ծածկելու համար, բայց հնում այդպիսի դեպքերում դիմում էին օժանդակ գերանաշարքերի օգնության։ Շենքի լայնքին դրվող երկրորդ շարքի գերանները, որոնց մի ծայրը հենվում էր պատի վրա վերին մասում, իսկ մյուսը՝ պատին զուգահեռ դրված սյուների գլխի գերանների վրա, զգալի կերպով նեղացնում էին կենտրոնական նավի առաստաղի բացվածքը և դրանով հնարավոր էր դառնում մի գերանով ծածկել կենտրոնական նավի լայնքը։

Այդպիսով կենտրոնական նավը կողքինների համեմատությամբ զգալի կերպով բարձրանում էր։

Կողքի թաղերի վրա դրվող երկրորդ շարքի գերաններր, բացի բացվածքը կրճատելուց, շենքի կենտրոնական նավն զգալի կերպով բարձրացնում էին և նրան տալիս առանձին շուք ու վեհություն։

Դվինում բացված գահասրահի եռանավ տեսքը գալիս է հերքելու այն սխալ տեսակետը, թե իբր բազիլիկ շենքերը Հայաստան մուտք են գործել քրիստոնեության հետ իբրև եկեղեցիներ և հաստատվում է, որ այդ տիպի շենքերը Հայաստանում գոյություն են ունեցել անկախ եկեղեցիներից, իբրև աշխարհիկ կառույցներ։ Բազիլիկ անունը, որ ճարտարապետները տալիս են Դվինի գահասրահի տեսքն ունեցող շենքերին, առաջ է եկել հունարեն βασιλικὸς—բազիլեուս—թագավոր բառից։ Հունարենում արքայական ապարանքը հնում կոչվել է βασίλειον —բազիլեյոն։ Նշանակում է բազիլիկ անունը համապատասխանում է Դվինի գահասրահի և՛ ճարտարապետական ոճին, և՛ շենքի բուն իմաստին, իսկ եկեղեցիների նկատմամբ այդ անունը գործածում են միայն արքայական դահլիճների ոճն ունենալու համար։ Իսկ բուն իմաստով եկեղեցիները չեն համապատասխանում իրենց բազիլիկ անվանը։

Դվինի գահասրահի ներքին հարդարանքի և կահավորման վերաբերյալ ոչ մի իրական տվյալ չունենք, բայց գիտենք, որ նա զարդարված պետք է լիներ հատակին փռած հայկական հռչակավոր գորգերով, իշխանական ու արքայական դահերով և բարձերով։

Ստեփանոս Օրբելյանը Մուշեղ Այլաբերդցի հայոց կաթողիկոսի (520—534) կապակցությամբ Սյունյաց իշխանական գահասրահի մասին հետևյալն է գրում. «Եւ այսպէս փառաւորութեամբ տարեալ (զկաթողիկոսն Հայոց Մուշէ) իջուցանէին ի խորանն արքայական և նստուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն, ի տեղին որ կոչի Կից վտակաց»[4]։ Հասկանալի է, որ այդպիսի մի գահ էլ Սյունյաց մեծ իշխանն ունենալու էր Արշակունի թագավորների գահասրահում, եթե ոչ ավելի լավն ու ավելի զարդարունը և անպայման, Սյունյաց իշխանական տան տոհմանշանով։

Արշակունիների գահասրահի պատերին անշուշտ եղել են ժամանակի ոգուն համապատասխան բարձրաքանդակներ, կարող էին լինել նաև որմնանկարներ, ինչպիսիք ունեցել է Դվինի Կաթողիկե եկեղեցին նույն ժամանակներում։ Այդ ժամանակ Հայաստանում տարածված էր նաև խճանկարը։

Կարևոր հարց է նաև Արշակունիների արքունիքում իշխանական «բարձ» կամ «գահ» ունեցող նախարարների թիվը, որի մասին այնքան հակասական թվական տվյալներ են պահպանվել մեր հին մատենագիրների երկերում։

Փավստոս Բուզանդը Մամիկոնյան տոհմի իշխանների քաջությունն ու հավատարմությունը գովաբանելուց հետո գրում է, որ Արշակունիների ժամանակ, Արշակ Բ թագավորի օրով (351—367) «Եւ այլ յայսմ աղգաց և ի խորանէ, որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զոտնակայս գործակալութեանն սպասու»[5]։

---

4 Ստեփանոս Օրբելեան, էջ 74։

5 Փավստոս, էջ 104։

Ուշ ժամանակի պատմագիր Ստեփանոս Օրբելյանը բոլորովին այլ տեղեկություն է տալիս հայ իշխանների թվի մասին։ Նա գրում է, որ Արշակունիների գահասրահում բարձ են ունեցել 400 իշխան, որոնք նստել են արքայի աջ և ահյակ կողմերում և նրանց թվից ութ իշխան էլ գահազուխ են եղել, որոնց թվին են պատկանել «...բդեաշխն Գուգարաց և իշխանն Աղձնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի և իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց և իշխանն Մամիկոնէից։ Սորա էին գահազուխք ամենայն իշխանացն Մամիկոնէից։ Սոքա էին գահազուխք ամենայն իշխանացն հայոց»[6]։



Նկ. 3. Գահասրահի հատակագծի վերակազմությունը ըստ Գ. Քոչոյանի

Դվինում մեր բաց արած գահասրահն այնքան տարողություն չունի, որպեսզի կարողանար իր ներսում տեղավորել իշխանական 900 կամ 400 բարձ, եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ 900-ը ձեռագիրն արտագրողի գրչասխալ է (Դ հարեւ-ի փոխարեն՝ Թ հարեւ)։

Մի հանգամանք էլ կա, որ դահլիճի տարողությունն ավելի է փոքրացնում։ Արքայական գահավորակը հատակին ամրացված վիճակում գտնվում է դահլիճի կենտրոնում, երեսով դեպի արեւելք։ Այդ ցույց է տալիս, որ իշխաններն իրենց ավագության կարգով կարող էին նստել, ինչպես նշում են մատենագիրները, արքայի աջ և ահյակ կողմերում և նրա առաջ, բայց ոչ երբեք արքայական գահավորակի թիկունքի կողմում. ուրեմն դահլիճի միայն արեւելյան կեսն էր օգտագործվում, որտեղ կենտրոնական նավում հնարավոր էր տեղավորել մոտ մի հարյուր մարդ, իսկ սյուների ետեւի նավերը պետք է հատկացված լինեին ոտքի վրա կանգնած մնացող երկրորդական իշխաններին։

Ակադ. Հ. Մանանդյանը գրում է. «Հիմնվելով աղբյուրների վրա, պատմագիտական և բանասիրական աշխատություններում նախարարությունների թիվը հին Հայաստանում ենթադրում էին 900 կամ 400։ Սակայն Ն. Ադոնցը մանրախույզ կերպով ուսումնասիրել է այս խնդիրը և, օգտվելով աղբյուրների ար-

6 Ստեփանոս Օրբելեան, էջ 24։

ժանահավատ տեղեկություններից, պարզել է արդեն, որ հին Հայաստանում նախարարական տոհմերի թիվը, որոնք այս կամ այն չափով հայտնի են եղել, պետք է հաշվել մոտավորապես մինչև հիսուն»[7]։

Մեզ թվում է, որ այս հարցում Ն. Ադոնցը ճիշտ է։ Իրոք որ քիչ թե շատ հայտնի նախարարությունների թիվը հազիվ 50 է եղել, բայց քանի որ գահնամակի թերի օրինակում արդեն 70 նախարարություններ հիշատակված են իրենց տոհմանուններով, նշանակում է նրանց ընդհանուր թիվը փոքր նախարարությունների հետ միասին 70-ից ավելի է եղել։

Այս հարցում մեզ մեծ օգնություն է ցույց տալիս զորանամակը (որ Ղ. Ալիշանը հրատարակել է իր «Այրարատ» աշխատության մեջ), ուր հիշատակված են 86 իշխանական տներ, որոնք որոշյալ թվով զորք են տվել Հայաստանի սահմանները պաշտպանելու համար[8]։ Ճիշտ նույն տեղեկություններն է հաղորդում նաև Ստեփանոս Օրբելյանը իր «Պատմության» էջերում։ Նա գրում է, որ հայկական սահմանապահ զորքը Արշակունիների ժամանակ չորս մեծ խմբերի է բաժանված եղել՝ Հայաստանի աշխարհագրական չորս կողմերը պաշտպանելու համար։ Նշում է նաև յուրաքանչյուր կողմին զորք տվող իշխանությունների թիվը, որոնց բոլորի գումարը 86 է եղել։ Ահա նրա խոսքերը. «Իսկ զօրացն և աշխարհին չորս միայն կացուցանել իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին։ Արևելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք, հիւսիսային կողմանն՝ բդեաշխն Բուզարացւոց՝ 22 իշխանօք, արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք, հարաւային կողմանն՝ իշխանն Անձևղտանն 22 իշխանօք, զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն հայոց զոր Ղևոնդ գրեաց»[9]։

Ստեփանոս Օրբելյանի «զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն հայոց» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ գահնամակի լրիվ ցանկի մեջ, որ մեր ձեռքը չի հասել, հայկական իշխանների թիվը Արշակունիների ժամանակ դարձյալ 86 է եղել։ Անկախ դրանից գահնամակի և զորանամակի համեմատական քննությունից պարզվում է, որ գահնամակի թերի ցուցակի մեջ եղած տոհմանուններից զորանամակում չեն հիշատակվում իշխանական վեց անուն[10]։ Գահնամակում, մեր ձեռքը հասած թերի օրինակում 70-րդ տոհմանունից հետո, ցուցակը ընդհատվում է և շարունակությունը չկա։ Այստեղ բացակայում են զորանամակի մեջ եղած երեսուն անուն, մեծ մասամբ փոքր իշխանությունների, որոնցից շատերը (հավանաբար 16-ը) տեղավորված են եղել գահնամակի բացակայող վերջին մասում։ Կան նաև իշխանություններ, որոնք երկու ցուցակներում տարբեր անուններով են հանդես գալիս և միայն այդ պատճառով գահնամակի և զորանամակի տվյալները միմյանց չեն բռնում[11]։

---

[7] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 320—321։

[8] «Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց հ. Ղ. վ. Ալիշան», Վենետիկ, 1890, ներդիր էջ։

[9] Ստեփանոս Օրբելեան, էջ 24—25։

[10] Իրականում տարբերությունը ութ անուն է, բայց դրանցից երկուսը հիշատակված են ոչ թե իրենց տոհմանունով, այլ իրենց գործակալական պաշտոնի անունով՝ «քաղաքապետն արքունի», «սրսապետն»։

[11] Զորանամակի և գահնամակի միջև եղած 30 անունների տարբերությունը իրականում մեծ բան չէ, որովհետև 16 անուն գրված է եղել գահնամակի վերջում, 10 տոհմանուն էլ զորանամա-

եթե հաշվի առնենք Ն. Աղոնցի դիտողությունները և դուրս հանենք իշխանական տոհմանունների կրկնությունները, ինչպես նաև մանր իշխանությունները, որոնք հազիվ թե գահ կամ բարձ կարող էին ունենալ արքայական սրահում և նրանց համար մեծ պատիվ էր լինելու ոտքի վրա թագավորին կամ գահերեց նախարարներին ունկնդրելը և եթե ընդունենք, որ արքունիքում բարձ են ունեցել այն իշխանները, որոնք 500 և ավելի զինվոր են տվել Հայաստանի սահմանները պաշտպանելու համար, այդ դեպքում արքունական գահասրահում բարձ կունենային միայն 33 իշխան։ Գուցե այդ թվի վրա գումարվեն նաև զինվորականներ, հոգևորականներ և գործակալական պաշտոններ ունեցողներ։

Բոլոր դեպքերում Դվինում մեր բաց արած գահասրահում կարող էին թագավորական գահավորակի առաջի մասի կենտրոնական նավում նստել մինչև 70—80 մարդ, իհարկե նայած թե իշխանական բարձերից յուրաքանչյուրն ինչքան տեղ էր գրավում և ինչքան տարածություն էր հատկացվում ելք ու մուտքի համար։

Դվինի այս գահասրահը հետագայում ժառանգել են մարզպանները և օգտագործել նույն նպատակով, այսինքն տեղացի հայ իշխանների մասնակցությամբ խորհրդի նիստեր են գումարվել այնտեղ V և VI դարերում, իսկ մարզպանության վերջերին այդ շենքը քանդված էր և նրա տեղում այնտեղ կառուցված էին այլ շենքեր, ինչպիսիք էին պետական դիվանը և կնքադրոշմների արհեստանոցը, որոնց մասին խոսք եղավ վերևում։

Մի կարևոր դիտողություն ևս։

Ակադ. Հ. Մանանդյանը բդեշխությունների հետ կապված իշխանությունների մասին գրում է. «Պետք է առանձնապես նշել, որ աղբյուրների մեջ հիշատակվում են նախարարություններ, որոնք ենթարկվում էին բդեշխներին»[12]։ Կարծում ենք, որ այս հարցում ակադ. Հ. Մանանդյանը ճիշտ չէ։ Եթե խոսքը վերաբերեր մեծ նախարարություններից կախում ունեցող վասալ իշխանություններին, հասկանալի է, որ չէիր առարկի, բայց չենք կարող հաշտվել այն մտքի հետ, որ զորանամակում և Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մեջ հայոց զորքերի չորս խմբի բաժանվելու վերաբերյալ խոսքերից կարելի է ենթադրել, թե սահմանապահ զորք տվող նախարարությունները ենթակա են եղել բդեշխներին և մեծ իշխաններին։ Նախ այն պատճառով, որ զորք տվող իշխանների կազմում իրենք՝ բդեշխներն ու սահմանային մյուս իշխանությունները ևս հիշատակված են (Գուգարացվոց բդեշխը, Սյունյաց իշխանությունը, Անձևացունը և Կորդվաց իշխանը) և երկրորդ՝ այն պատճառով, որ Հայաստանում պետական սահմանների պաշտպանությունը ընդհանուր գործ էր բոլոր նախարարությունների համար և չէր կարող թողնվել միայն բդեշխների վրա։ Այդ էր պատճառը, որ Հայաստանի սահմանները թշնամուց պաշտպանելու համար բոլոր մեծ ու փոքր նախարարությունները բաժանված են եղել չորս խմբի և ամեն մեկը որոշակի թվով զորք էր տալիս սահմանների պաշտպանության համար։

Յուրաքանչյուր նախարարությունից տրվող զինվորների թիվը, որ նշված է զորանամակում, անշուշտ կախված է եղել իշխանության հզորությունից, մե-

---

կում կրկնություն են, այսինքն այն նախարարությունների անուններն են, որոնց իշխանությունը երկուսի կամ երեքի է բաժանված եղել։ Ուստի իրական տարբերությունը երկու ցուցակների միջև 3—4 տոհմանուններից ավելի չէ։ Այդ էլ, ըստ երևույթին, առաջ է եկել իշխանների ունեցած տարբեր անվանումներից։

12 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 320։

ծությունից և մարդաշատությունից։ Երկրի պաշտպանության համար ամենամեծ թվով զորք է տրամադրել Ս յունյաց իշխանությունը՝ 19400 զինվոր, իսկ մանր իշխանություններից շատերը տվել են միայն 50 զինվոր։ Այդքանից պակաս զինվոր տվող իշխանություն չկա զորանամակի մեջ։

Ըստ զորանամակի բոլոր 86 նախարարությունները միասին տվել են 84500 զինվոր։ Նշանակում է այդքան է եղել Հայաստանի սահմանապահ զորքի ընդհանուր թիվը Արշակ II-ի ժամանակ։

Զորանամակի տվյալներով Հայաստանի արևելյան սահմանների պաշտպանությանը մասնակցել են 21 իշխանություն, որոնց զորաբանակն ունեցել է 21400 զինվոր։ Արևմտյան սահմանի պաշտպանությունը հանձնված է եղել 21 իշխանության, որոնք ունեցել են 24100 զինվոր։ Հյուսիսը պաշտպանել են 22 իշխանություն՝ 18000 զինվորով։ Հարավը՝ 22 իշխանություն՝ 21000-անոց զորաբանակով։ Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի սահմանապահ բոլոր զինվորների թիվը եղել է 84500։

Բացի սահմանապահ զորաբանակից Արշակունի հայ թագավորներն ունեցել են նաև գլխավոր կոչող զորաբանակ սպարապետի անմիջական հրամանատարության ներքո։ Սպարապետության պաշտոնը թեև Մամիկոնյան տոհմի մենաշնորհն էր, բայց սպարապետին անձամբ թագավորն ինքն էր նշանակում։ Փավստոս Բուզանդը գրում է. «Եւ կացոյց արքայն (Արշակ Բ) զՎարդան (Մամիկոնեան) զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց. և զՎասակ միջին եղբայրն. զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիրս պատերազմացն. սոյնպէս զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր»[13]։

Սահմանապահ չորս հրամանատարներին և մյուս մեծ հրամանատարներին Արշակն ինքն էր նշանակում։ Փավստոսը գրում է. «Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու։ Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցաներ»[14]։ Սակայն պետք է համաձայն լինենք ակադ. Հ. Մանանդյանի այն տեսակետին, որ սահմանապահ զորքերի չորս գլխավոր հրամանատարները նշանակվում էին բդեշխների և սահմանային մեծ իշխանությունների տոհմից։

Հայաստանը, բացի սպարապետի և սահմանապահ զորքերից, ունեցել է նաև ներքին զորամասեր՝ երկրի կարգը, արքունիքը, բերդերը, քաղաքները, գանձատները պահպանելու համար։

Բ. Հում աղյուսե շինությունը

Հում աղյուսե մեծ շինությունը, որ բացվել է 1918—1955 թթ. Դվինի միջնաբերդի գագաթին, վերևից հաշված երկրորդ շերտում, շատ ավելի ընդարձակ տարածություն էր ընդգրկում, քան նույն տեղում վերին շերտում պեղված տունը, որի մասին իր ժամանակին գրել ենք մեր հաշվետվության մեջ[15]։

Հում աղյուսե շենքը բավականին խորն էր թաղված հողի մեջ (մոտ 1,5—2,0 մ) ու թեև արևելյան կողմի մնացորդները դետնի մակերեսին հասնում էին

13 Փ ա վ ս տ ո ս, էջ 103։

14 Նույն տեղում։

15 Տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952, էջ 122—138։

երկու մետրի, բայց բլուրի հյուսիսային և արևմտյան կողմերում նրա մնացորդների հետքերը կորչում էին. երբեմն միայն առանձին զանգվածներ ի հայտ էին գալիս հողաշերտի մեջ, որոնք դժվարությամբ էին տարբերվում նույն աղյուսների քայքայումից առաջացած հողաշերտից։



Նկ. 4. Հում աղյուսե շինության հեռապատկերը

Այս շենքը կառուցված է եղել հում աղյուսով։ Տարօրինակ կերպով նրա շինության մեջ ոչ մի կտոր քար չի օգտագործված հիմքից սկսած մինչև վերև, և կարծեք թե այդ շենքը բարաշատ Հայաստանում չի կառուցվել, այլ մի անապատ տեղում, որտեղ ավազից և կավից բացի ոչինչ չի եղել։ Ճիշտ է, Հայաստանում աղյուսաշեն շենքեր շատ կան, սկսած ուրարտացիների ժամանակներից և վաղ հայկական ժամանակաշրջանից (ինչպես օրինակ Կարմիր բլուրում, Արին բերդում, Դվինի մեհյանում և այլն), բայց նրանց բոլորի հիմքերը և պատերի ստորին մասերը քարով են շարված, այն էլ անպատճառ որձաքարով, որպեսզի խոնավությունը վերև չբարձրանա և շենքն ազատ լինի այդ չարիքից։ Իսկ այստեղ, հում աղյուսե շենքում, կառուցողները բոլորովին հաշվի չեն առել խոնավության հանգամանքը և երբ պատերի երեսի հողաշերտն էինք հանում, պատերը խոնավությամբ ներծծված էին այն աստիճան, որ հետագայում, տարիներ շարունակ բաց վիճակում արևի տակ մնալուց հետո էլ լավ չէին չորանում։

Մնացորդներից երևում է, որ այդ մեծաղանգված կառույցը, որի դրսի պատերի հաստությունը 2,0 մետր է, իսկ ներսի պատերինը՝ 1,8, Π գրի ձև է ունեցել, մեջտեղի բակը դեպի հարավ ուղղված, իսկ արտաքին պատերը եղել են բոլորովին խուլ։ Ուրեմն մուտքի բոլոր դռները ու պատուհանները բակի կողմից են եղել։ Բակի առաջը դեպի հարավ բաց լինելը կարևոր է համարվել, անշուշտ, երկու տեսակետով. այդտեղ հաշվի է առնվել քամիների ուղղությունը և Արարատյան դաշտի տեսարանը Մասիսների և Հայկական Պարի եզրագծով։

Շենքն իր արևելյան թևում ունեցել է իրար կից վեց սենյակ, կողք-կողքի կառուցված, մի շարք սենյակներ էլ կառուցված են եղել շենքի հյուսիսային թևում, դարձյալ մի շարքի վրա, մի քանի սենյակներ էլ՝ արևմտյան թևում։ Սակայն, ինչպես ասացինք, հյուսիսային և արևմտյան շարքերի սենյակները չեն պահպանվել։ Այժմ հնարավոր է միայն ընդհանուր գծերով որոշել շենքի այդ երկու կողմերի սահմանները։ Պեղումների ժամանակ նույնիսկ հնարավոր չեղավ իմանալ, թե հյուսիսային և արևմտյան շարքերում իրար կողքի քանի սենյակներ են եղել։

Արևելյան շարքից երևում է, որ բոլոր սենյակները միաչափ չեն եղել, այլ երկու երկարաձիգ ուղիղ պատերի միջև լայն և նեղ սենյակներ են գոյություն ունեցել, միջնորմները հեռու կամ մոտիկ դնելու հետևանքով, ըստ որում մեծ սենյակն ունի 46 քմ, իսկ փոքրը՝ 36 քմ մակերես։ Արևմտյան շարքի սենյակների մասին ոչինչ չենք կարող ասել, իսկ հյուսիսային կողմինները, մեր կարծիքով, ամենամեծերն են եղել։ Այդ երևում է արևելյան շարքին կից սենյակի մնացորդներից և նրանցից ընկած բեկորներից։

Ամբողջ շենքը՝ իր սենյակների երեք շարքերով՝ իր բակով ու ջրավազանով, բռնել է մոտավորապես 3000 քմ տարածություն (50×60 մ)։ Հետաքրքիր է, որ շենքը, իր երկու մետր լայնք ունեցող պատերի մնացորդներով, սենյակների մուտքեր չունի, բացառությամբ մի տեղի։

Ե՞րբ է կառուցվել այս շենքը և ի՞նչ նպատակների է ծառայել։

Եթե վերին շերտի շենքերը Դվինում կառուցվել են 893 թ. մեծ երկրաշարժից հետո, նշանակում է, որ այս շենքը, որ նրանց տակին էր գտնվում, պետք է կառուցված լիներ այդ երկրաշարժից առաջ։ Սակայն, ինչպես հայտնի է, այդ երկրաշարժից առաջ, մոտ երկու հարյուր տարի, VIII և IX դարերում, արաբական տիրապետության ժամանակ, Հայաստանում ոչ մի նշանավոր բան չի կառուցվել, բացի մի դեպքից, որի մասին հիշատակություն ունեն և՛ հայ մատենագիրները, և՛ արաբ հեղինակները։

Մատենագիրները վկայում են այն մասին, որ VII դարի կեսերից սկսած արաբական արշավանքներից հետո, երբ Մուհամմեդ իբն Մրվանը VII դարի վերջին և VIII-ի սկզբին կարողացավ վերջնականապես նվաճել Հայաստանը և այնտեղ ստեղծել Արմինիա ոստիկանությունը[16], Աբդուլ-Ազիզն (706—709 թթ.) իր ոստիկանական աթոռը հաստատեց Դվինի միջնաբերդում և Դվին քաղաքը դարձրեց ոստիկանության կենտրոն։ Աբդուլ-Ազիզի ոստիկանության մասին գովեստով են խոսում նույնիսկ հայ մատենագիրները, նշելով, որ հատուկ թրքթով նա ետ է կանչել արաբական հալածանքներից փախած Դվինի հայ բնակչությունը, քաղաքում ապրելու համար բարեկեցիկ կյանքի պայմաններ է ստեղծել և վերահաստատել խաղաղությունը։ Մեր մատենագիրները վկայում են, որ Աբդուլ-Ազիզը խաղաղություն հաստատելուց հետո վերակառուցում է Դվին քաղաքը, ավելի ամրացնում և ընդարձակում, քան թե առաջ է եղել։

Դեպքերին գրեթե ժամանակակից Ղևոնդ Երեցը գրում է. «Իսկ Աբդլ-Ազիզն տիրեալ աշխարհիս Հայոց՝ խաղաղացոյց զամենայն յարձակմունս անիրաւութեան աշխարհէս. և զխրոխտացեալ անզգամութիւն որդւոցն Իսմայելի սաստիկ կշտամբութեամբ ցածուցանէր։ Շինէր վերստին զքաղաքն Դուին՝ հզօրագոյն և

16 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 263։



Նկ. 5. Հում աղյուսե շինության մնացորդները

ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր զրամբք և զոնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին քանզի ասէր զիւրմէ Աբդլ-Ազիզ. [«] Յառաջնում աւերածին Դունայ, եթէ ի ձեռն իմ եղև կործանումն քաղաքին, և ես կանգնեցից զսա [»][17]։ Մխիթար Այրիվանեցին գրել է. «Աբդլազիզ շիննաց զԴուին»[18]։ IX դարի արաբ մատենագիր Բալաձորին (վախճ. 892 թ.) իր «Երկրների նվաճման մասին» գրքում գրում է, որ Աբդուլլահ իբն Հաթիմի մահվանից հետո Հայաստանի կառավարիչ է նշանակվում նրա եղբայր Աբդուլ-Ազիզը, «որը կառուցեց Դեբիլ [Դվին] քաղաքը, ամրացրեց և մեծացրեց նրա մզկիթը։ Նա էլ կառուցեց Նաշավա [Նախճավան] քաղաքը և վերակառուցեց Բերդա քաղաքը, իսկ ըստ այլոց կառուցեց և լավ ջրափոսով շրջափակեց և վերսկսեց Բայլական [Փայտակարան] քաղաքի կառուցումը, քանի որ այդ քաղաքները բոլորովին քարուքանդ և անկյալ [վիճակում] էին»[19]։ Ասողիկը գրեթե կրկնել է Ղևոնդ Երեցին։ Նա գրել է. «Իսկ փոխանակ Մահմեդի առարէ Վլիթ զԱրդլազիզ ոմն, որ էր խօթ լսելեօք, որ խաղաղացոյց զաշխարհս հայոց և շիննաց զքաղաքն զԴուին հզօրագոյն և ես արձականիստ մեծութեամբ քան զառաջինն։ Զի ասէր. «Ի ձեռն իմ եղև կործանումն քաղաքիս, և ես կանգնեցից զսա. զի էի ես, ասէ, մանուկ ԺԲ ամեայ և ունեի սփածանելի կարմիր. և յորժամ մարտնչէր զօրն Իսմայիլի ընդ քաղաքս՝ մտի ես ընդ խոզովակ մի և ելի ի պարիսպն և ի ձայն ուժգին աղաղակեցի առ զօրսն մեր. և

[17] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի», ՍՊր, 1887, էջ 36։

[18] «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 51։

[19] Баладзори, Книга завоевания стран, текст и перевод, пер. с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 15։

թոթափեցան ամենայն պայիկք նախամարտկացն ի պարսպէն. և հղօրացեալ զօրն Տաճկաց առին զքաղաքս»։ Եւ այս այսպէս»[20]։

Այս բոլոր տեղեկությունները գալիս են ապացուցելու, որ Դվինի բուրգավոր պարիսպները, նրա բերդը շրջապատող ջրափոսը, ինչպես նաև Հայաստանի համար խորթ հում աղյուսե մեծ շենքն իր չորս կողմից փակ բակով ու ջրավազանով միասին կառուցված է եղել VIII դարի առաջին տասնամյակում արաբ ոստիկան Աբդուլ Ազիզի ժամանակ, երբ Դվինի և մի քանի այլ քաղաքների վերականգնումը ծայրահեղ անհրաժեշտություն էր, որովհետև այլևս նրանք Դվինն ու մյուս քաղաքներն ավերելուց հետո իրենց ձեռք բերած ավարով չէին վերադառնալու իրենց երկիրը, ինչպես այդ անում էին VII դարի արշավանքների ժամանակ, այլ եկել էին հաստատվելու և իշխելու նպատակով։ Դրա համար էլ անհրաժեշտ էր բերդն ու քաղաքը ամրացնել, տեղում մզկիթ կառուցել[21] և իրենց համար միջնաբերդում բնակելի տներ շինել հին ավերակների վրա։

Այդ տեսակետից Աբդուլ-Ազիզի կատարած շինարարական աշխատանքները և տեղում կարգ ու կանոն հաստատելը պետականորեն խիստ անհրաժեշտ բնույթ էին կրում, և այդ էր պատճառը, որ արաբները մեղմ քաղաքականություն վարեցին Դվինում իրենց իշխանության սկզբում և միայն հետագայում սկսեցին ծանր տուրքեր դնել ժողովրդի վրա։

Արաբների տիրապետության երկհարյուրամյա ժամանակաշրջանում սա միակ դեպքն է, երբ արաբները շահագրգռվածություն են ցուցաբերել շինարարության նկատմամբ։ Այս ժամանակ է, որ կառուցվել է հում աղյուսե մեծ շենքը Դվինի միջնաբերդում։ Սակայն ինչի՞ է ծառայել խուլ պատերով այդ արտասովոր շենքն իր ջրավազանով, փակ ու բաց բակերով։ Կարծում ենք, որ դժվար չէ կռահել նրա դերը արաբ ոստիկանների պալատի մեջ։ Ամենայն հավանականությամբ, նրանում տեղավորված է եղել Աբդուլ-Ազիզի և նրա հաջորդների կանանց բազմանդամ հարեմը, որին այնքան մեծ նշանակություն էին տալիս իսլամի դավանանքին պատկանող բոլոր իշխաններն ու թագավորները։ Այդ շենքի ներսում խանդոտ արաբ ոստիկաններն իրենց կանանց բոլորովին մեկուսացրել են արտաքին աշխարհից և հանձնել ներքինիների դաժան հսկողությանը։

* * *

Վերևում շարադրվածից եզրակացնում ենք.

1. Արշակունի հայ թագավորների օրով կառուցված դահասրահն ունեցել է ներսում երեք նավի բաժանված դահլիճ, որի կենտրոնում, թագավորի առաջ, ինչպես նշում են մատենագիրները, իրենց բարձերի վրա նստելիս են եղել դահերեց և ավագ ծախարարները, իսկ կրտսեր իշխանները հոտնկայս են ունկընդրել հայոց արքային և դահերեց իշխաններին։

2. Դվինի դահասրահը մեզ հայտնի աշխարհիկ միակ շենքն է, որ կառուցված է քաղաքի հիմնադրման ժամանակ, IV դ. 30-ական թթ. և որի ավերակները հասել են մեր օրերին։

---

20 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊբ, 1885, էջ 125—126։

21 Աբդուլ-Ազիզի կառուցած մզկիթի տեղը հայտնի չէ։ Նա պետք է եղած լինի քաղաքի մեջ, բերդից դուրս, որովհետև բերդը, որտեղ իշխանությունն էր տեղավորված, մատչելի չէր մահմեդական հասարակ բնակչության համար։ Ըստ երևույթին, այդ շենքը նշանավոր բան չի եղել, քանի որ 893 թ. երկրաշարժից հետո մզկիթի են վերածել կաթողիկոսի կիսավեր պալատը։

3. Գահանիստ դահլիճի գոյությամբ հերքվում է այն կարծիքը, որ իբրև թե եռանավ շենքերը Հայաստան մուտք են գործել Ասորիքից՝ հայերի քրիստոնեություն ընդունելու ժամանակ։

4. Գահասրահի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայ նախարարների թվի մասին Ն. Ադոնցի հաշվումները ճիշտ են։

5. Դվինի միջնաբերդի հում աղյուսե մեծ շինությունը տեղական պայմանների համար խորթ կառուցվածք է, շինվել է VIII դ. առաջին տասնամյակում արաբ իշխան Աբդուլ-Ազիզի հրամանով և քանդվել է 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ։

ДВА АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКА ИЗ РАСКОПОК ДВИНА

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Статья посвящена разбору результатов исследования двух крупных зданий, раскопанных в Двине за последние десятилетия среди множества других. Одно из этих зданий, расположенных в центре цитадели, представляет собой большой зал, площадью в 360 кв. м. В центральной части пола этого помещения был установлен трон царя, от которого сохранились четко вырисовывающиеся следы. Изучение археологического слоя и свидетельства армянских средневековых историков (Павстос Бузанд, Степанос Орбелян) приводят к выводу, что упомянутое помещение является тронным залом дворцового здания, выстроенного по приказу царя Хосрова Кодака (330—338) при основании города.

Второе здание, рассматриваемое в статье, было открыто во втором (сверху) слое двинской цитадели и выстроено из сырцового кирпича. Оно не соответствует памятникам армянской архитектуры по структуре, является совершенно чуждой и инородной постройкой для Армении. Данные археологии, а также армянских и арабских средневековых источников дают основания утверждать, что это здание было построено по приказу арабского правителя Армении Абдул-Азиза (706—709). Возможно, что здесь находился гарем правителя. Здание было разрушено при большом землетрясении 893 года.